

նի քայլ է Գանձակի ու Յովհաննէս Մ. եկեղ. երեցփօխի վարժաւորը. մենք այստեղ կը բաւականանք առաջ բերելով հաշուեգրքից գլխաւոր գումարները: Եկեղեցու առաջի 1889 և 1890 թ. առաջին հաշուեգրութիւնից երեւացել է որ նա 1891 թ. Յուն վարի 1-ն ունեցել է 27,034 ռ. 86 կ. իսկ մի տարուց յետոյ այն է 1892 թ. Յուն վարի 1-ն մայր գումար եղել է 26,248 ռ. 59 կ., ասել է նախընթաց տարու հետ համեմատած մայր գումարից պակասել է 786 ռ. 27 կ., իսկ 1892 թ. վերջին ներկայացրած է մուտք 42,103 ռ. 42 կ. նոյնքան էլ ծախք և իբրև ստանալիք 1893 թ. Յուն վարի 1-ն մնում է 35,097 ռ. 21 կ. եկեղեցւոյ գումարը ծախուում է ամենից առաջ եկեղ. դպրոցների համար 2,926 ռ., գիմնադիոնի կրօնօսոյցին 300 ռ., առաջնորդարանին 560 ռ., կալուածքների ծախք 512 ռ. իսկ միւս ծախքերը փոքր են:

ДРЕВНОСТИ ВОСТОЧНЫЯ.

Труды восточной комисіи Импер. Моск. Археол. общества, издание подь редакціей М. В. Никольскаго т. I. Москва. 1893.

Այս գեղեցիկ և հետաքրքիր հրատարակութիւնը խմբագրութիւնն ստացել է շնորհակալութեամբ. պ. Յ. Յովհաննիսեանի ձեռքով: Նորա մէջ կան հետևեալ շարագրութիւնները. 1. Ирано-финскія лексикальныя отношенія члена корреспондента р. р. шкапельберга էջ 283—298. 2. Источники по введенію христіанства въ Грузіи члена корреспондента А. С. Хаханого. էջ 299—345. 3. О четырехъ обязанностяхъ дервиша, члена-корреспондента М. С. Щекіна էջ 345—352. 4. О двухъ ассирійскихъ фрагментахъ князя П. А. Путятіна. Дѣйств. чл. М. В. Никольскаго. 5. Десятый международный сѣздъ ориенталистовъ въ Лондонѣ. сентябрь 1891 года. Дѣйств. чл. С. С. Слудскаго. Այս յօդուածը զբաղւում է ոչ միայն վերջին հինգերորդ Ժողովի գործունէութեան նկարագրութեամբ, այլ տալիս է նաև նախկին Ժողովների համաժողով և ամիսով պատմութիւնը, ուստի արժէ ամբողջապէս

Թարգմանելով միջոց տալ հայ ընթերցող հասարակութեանը ծանօթանալու այն միջազգային գիտնականների համախմբման նպատակների և ձգտման հետո որոնք աշխատում են ուսումնասիրել մեր հարևան արևելեան մեծ ազգերի, մասամբ նաև մեր ազգի անցեալ և ներկայ մտաւոր կեանքի գործունէութեան արդիւնները:

6. Клинообразныя надписи ванскихъ царей, открытыя въ при-
дѣлахъ Россіи. Дѣист. чл. М. В. Никольскаго.

Յօդուածագրի նպատակն է ի մի հաւաքելով այն բոլոր բեւեռաձև արձանագրութիւնները, որ գտնուել են Ռուսա-Հայաստանում և նոցա պարզաբանելով ամբողջութեամբ հրատարակել: Յօդուածը բաղկացած է երեք գլուխների բաժանած մի ընդհանուր տեսութիւնից և 17 գլխից բաղկացած արձանագրութեանց բնագրերի մեկնութեան և ծանօթութեան հրատարակութիւնից: Առաջին գլխում խօսում է այն գիտնականների և մասնաւոր անձանց մասին, որոնք ուշադրութիւն դարձրին և հետաքրքրուեցին բեւեռաձև արձանագրութեանց ուսումնասիրութեամբ և ժողովածով ապա յիշատակում է Ռուսա-Հայաստանի այն գլխաւոր կենդրոնները, ուր մեծ քանակութեամբ գտնուել են արձանագրութիւններ: Այս գլխին հետևում է երկրորդ աւելի հետաքրքրական գլուխը, որ հեղինակը յենուելով ասորական տարեգրութեանց և արձանագրութեանց վրայ, փայլուն և կենդանի կերպով պատկերացնում է մեզ այն մեծ պատերազմների ընդհանուր նկարագիրը, որի մէջ երկու մեծ ազգութիւններ՝ հարաւում Ասորիները, իսկ հիւսիսում Ալորոգները (այս դարձուածքը գործ է ածում նա հետևելով Հերոդոտոսին) մի քանի դար զօրեղ և անընդհատ կերպով մաքառում են, մինչև Ասորիների Սարգոն թագաւորի օրով վերջնական յաղթութիւն են տանում Ուրարտայի՝ այն է Սարատեան աշխարհի Ուրտա կամ Բուսա թագաւորի վրայ: Ուրարտացիք թէև չեն սօրկանում, բայց ուժասպառ մաքառումից յետ են կանգնում և բացարձակ գերիշխանութիւնը ազգերի վրայ թալկում են Ասորիներին: Երրորդ գլխի մէջ համառօտապէս յիշուում են, որ Ռուսա-Հայաստանում գտնուել են մինչև օրս 22 արձանագրութիւններ, որոնցից 17-ը ինքը հրատարակում է, իսկ

մնացած 5-ից չունի ճիշտ արտաստված թիւներ, ապա յիշուած են նաև արձանագրութեանց գտնողների անունները: որից երևում է, որ Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանը ամենից շատ է գտել 1: Այս ընդարձակ յօդուածը թարգմանուելով մաս մաս լոյս կրտսնի Արարատի էջերում:

7. Объ армянской рукописи IX. века, принадлежащей библиотекѣ Лазаревского Института восточныхъ языковъ, Чл. коресп. X. И. Кучукъ—Іоаннесова.

Պ. Յովհաննէսեանը այստեղ նկարագրում է մեր Հայերէն ձեռագրերի ամենահին յիշատակարանը, այն է լազարեան ճեմարանի յայտնի Աւետարանը գրած Հայոց ՅԼԶ (336) թուին կամ Փրկչի 887 թ. Այդ թանգագին նշխարը ճեմարանը ընծայ է ստացել 1817 թ. Թէոդոսիացի Խաչուկով վաճառականից: Յօդուածում գրուած են Աւետարանի յիշատակարանների բնագրերը և սոցա թարգմանութիւնը, իսկ վերջում քաղելով Զ. Մսերեանի «Փարոս»-ի 1876 թ. V. տետրի մէջ լոյս տեսած յօդուածից՝ տեղեկութիւնք զհանգամանայ հնագոյն գրչագիր Աւետարանին՝ որ գտանի ի մատենադարանի լազարեան ճեմարանի՝ տալիս է այն տարբեր ընթերցուածքները, որ ունի Աւետարանը համեմատած 1817 թ. Ս. Պետերբուրգում լոյս տեսած Աստուածաշնչի հետ: Հայերէնի մօտ տալիս է թէ ռուսերէն թարգմանութիւնը և թէ յունարէն բնագիրը: Բաղդատուութիւնից երևում է, թէ ընթերցուածների մէջ ինչ մեծ տարբերութիւն կայ:

1. Վերջին գտնուած արձանագրութիւնը (Սարգարապատի արձանագրութիւն) որի մասին հրատարակուեց Արարատում անցեալ տարի, տպուած է Նիկոլսկու հրատարակութեան մէջ առանց գտնողի անուն: Մի ոմն պ. Քուչուկ—Յովհաննէսով հաղորդելով Նիկոլսկուն Սէյսի թարգմանութիւնը, գտնել է մեր խմբագրութեան առաջին գործակցի՝ Միաբանի, անունը, որի խուզարկութեանցն ենք պարտական այդ նշանաւոր արձանագրութեան գիւտը: Իւր այդ վարմունքով պ. Քուչուկ Յովհաննէսովը հետևել է «Արձագանքի» խմբագրութեան տուած «աղնիւ» օրինակին, որը արտաստվելով «Ամսօրեայ Հանգէսից» բնեռագիրների մասին յօդուածը, արել էր նոյն գրական աղնւթութիւնը: